#eu4business

EaP | Eastern Partnership

# ԵՄ-Ն ՆՊԱՍՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ

Եվրամիությունը **EU4Business** նախաձեռնության միջոցով ֆինանսավորում, վերապատրաստում և դեպի նոր շուկաներ արտահանման աջակցություն է տրամադրում հայաստանյան ընկերություններին

## ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՐԴԵՆ ՕԳՏՎԵԼ



### ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
### ՀԱՑԹՈՒԽ

**ԵՄ-ից ստացած** երկու **վարկերի** շնորհիվ վերափոխեց իր բիզնեսը, ինչը նրան հնարավորություն տվեց տեղադրելու էներգաարդյունավետ գազի վառարաններ: Վահանի բիզնեսն ընդլայնվեց, և նա այժմ ապահովում է 11 մարդու զբաղվածություն:



### ՎԱՐԴԱՆՈՒՇ ՊԵՏՐՈՍՅԱՆ
### ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ

**ԵՄ-ից դրամաշնորհ է ստացել** նոր կայք ստեղծելու նպատակով: Այժմ «Ինգրեդիենտ» սրճարանի հաճախորդների թիվն ավելացել է 80%-ով, և այն ապահովում է 12 մարդու զբաղվածություն:



### ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
### ՖԵՐՄԵՐ

Ընդլայնել է իր գյուղատնտեսական գործունեությունը **ԵՄ-ից ստացած** երկու **վարկերի** շնորհիվ, ինչը նրան թույլ է տվել նոր մշակաբույսեր տնկել և ձեռք բերել նոր մեքենասարքավորումներ՝ արտադրական ծախսերը կրճատելու և արտադրանքն ավելի հեռավոր վայրերի հաճախորդներին առաքելու համար:

## EU4BUSINESS-Ը ԹՎԵՐՈՎ (2009-2016)

ԵՄ ներդրումը՝ 20,5 **մլն եվրո**

Ընկերություններին տրամադրվել են 473 մլն եվրոյի չափով վարկեր

Աջակցություն են ստացել 25,000 ձեռնարկություններ (վարկեր, վերապատրաստում, խորհրդատվություն)

Ստեղծվել են 900 նոր աշխատատեղեր

# ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

EU4BUSINESS

| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ | ԳՈՐԾԱՐԱՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ | ՆՈՐ ՇՈՒԿԱՆԵՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|
| • Վարկերի տրամադրում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին<br>• Միկրովարկերի տրամադրում փոքր ձեռնարկություն ստեղծելու կամ զարգացնելու համար<br>• Դրամաշնորհների տրամադրում նորարարական և բարձր տեխնոլոգիական ստարտափներին | • Մարդկային ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման ոլորտներում անհատական խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական աջակցության տրամադրում ընկերություններին<br>• Ձեռնարկատերերի հմտությունների բարելավմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր<br>• Անհատական վերապատրաստում և ուղղորդում կին ձեռնարկատերերի համար<br>• Աջակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ սոցիալական ձեռնարկատիրության միջոցով եկամուտ ապահովելու նպատակով | • Արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների համար գործարար խորհրդատվության տրամադրում և վերապատրաստում |

## EU4BUSINESS-Ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի փոքր ձեռնարկություններին օգնում է աճել

**Ապահովում է ֆինանսական միջոցների հասանելիություն**, դեպի նոր շուկաներ արտահանելու աջակցություն, աճի համար նոու-հաու

Գործում է EU4Business-ի տեղական հեռախոսահամար Հայաստանի ձեռնարկությունների համար

+374 55 10 80 40

ԵՄ-ն **հայաստանյան** ընկերություններին աջակցում է EU4Business **նախաձեռնության** միջոցով և գործակցում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերականգնման վարկերի բանկի (KfW), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Առևտրի միջազգային կենտրոնի, Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոնի, Եվրոպական առևտրաարդյունաբերական պալատների ասոցիացիայի (EUROCHAMBRES), Արհեստագործական, փոքր և միջին ձեռնարկությունների եվրոպական ասոցիացիայի (UEAPME), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Համաշխարհային բանկի և Հայաստանի Եվրոպական բիզնես ասոցիացիայի (ԵԲԱ) հետ:

EaP | Eastern Partnership

Պարզեք, թե ինչ է հասանելի.
www.eu4business.eu/am